ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԽԱԿԻ

«ԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
КАЗАРЯН ТИГРАН МЕХАКОВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЪЕКТИВНОСТИ ПОЛОЖИТЕЛЬНОГО ПРАВА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание степени кандидата юридических наук по специальности 12.00.01 – «Теория и история права и государства; история государственных и правовых учений».

ЕРЕВАН 2017

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Վաղարշյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ստեփանյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ Ա. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. մայիսի 29-ին, ժամը 12^{00}-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան-0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ. ապրլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ.
քարտուղար, ի. գ. թ., դոցենտ **Ա. Մանասյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: **док юрид. наук, профессор А. Вагаршян.**

Официальные оппоненты: **доктор юрид. наук, профессор В. Степанян**
кандидат юрид. наук, ассистент А. Карапетян

Ведущая организация: Центр конституционного права РА

Защита диссертации состоится 29-ого мая 2017 г. в 12^{00} ч. на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван-0025, ул. Алека Манукяна 1). С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников Ереванского государственного университета.

Автореферат разослан 27-ого апреля 2017 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент **А. Манасян**

Թեմայի ուսումնասիրման արդիականությունը: Տարբեր գիտական հրապարակումներում, նախ և առաջ՝ մենագրություններում, ուսումնամեթոդական ձեռնարկներում նվիրված պետության և իրավունքի տեսությանը և դրա հիմնահարցերին, մի շարք իրավագետներ (հատկապես՝ խորհրդային և հետ-խորհրդային շրջանի իրավագետներ, այդ թվում՝ Դ.Ա. Քերիմով, Ս.Ս. Ալեքսեև, Վ.Ս. Ներսեսյանց, Վ.Ի. Չետվեռնին) պնդում են այն թեզը, որ դրական իրավունքը օբյեկտիվ է: Սակայն, այնուամենայնիվ, նրանց աշխատանքներում մնում է չուսումնասիրված, թե ի՞նչ է դրական իրավունքի օբյեկտիվությունը, ինչպե՞ս է դրական իրավունքը օբյեկտիվ և ինչպիսի՞ միջոցների և չափանիշների ներքո է հնարավոր դրական իրավունքի օբյեկտիվությունը: Այս առումով, թեմայի վերաբերյալ առկա անգլո-ամերիկյան որոշ հեղինակների (Կ. Գրինավալտ, Ա. Մարմոր, Մ. Կրամեր և ուրիշներ) ուշադրությունը և որոշ հրապարակումները ևս չեն հավակնում ծածկել տվյալ հարցադրումների հետևանքով առաջացած բացերը: Այսպես, հիմնախնդրային տեսք են ստանում՝ դրական իրավունքի օբյեկտիվության որոշակի հիմնահարցերի խումբ կամ հիմնահարցերի որոշակի ասպեկտներ՝ բաց թողնելով ուշադրության կենտրոնից թեմայի ուսումնասիրման համար անհրաժեշտ և կարևոր առանձին հիմնախնդիրներ և դրանցից ածանցվող հիմնահարցեր:

Այսպես, ուշադրության կետնրոնից բաց են թողնվում դրական իրավունքի օբյեկտիվության՝

ա. լեզվանշանագիտական հիմնախնդիրը և դրանից ածանցվող հիմնահարցերը, կամ (և),

բ. լեզվատրամաբանական հիմնախնդիրը և դրանից ածանցվող հիմնահարցերը, կամ (և),

գ. գիտաբանական հիմնախնդիրը և դրանից ածանցվող հիմնահարցերը:

Երկրորդ, ուսումնասիրման թեմայի արդիականությունը կապված է նաև մեր օրերում զարգացող իրավագիտության հարացուցային փոփոխությունների կողմնակիցների կողմից՝ ոչ դասական կամ հետդասական մեթոդոլոգիայի և դիսկուրսների թմբկահարման հետ (Ի.Լ. Չեստնով, Վ.Ի. Պավլով, Ս.Ի. Մակսիմով, Ա.Վ. Պոլյակով, Ե.Վ. Տիմոշինա, Ա.Վ. Ստովբա): Քանզի այս դիսկուրսի ներկայացուցիչները պնդում են, որ պետք է հաղթահարել նախկին իրավագիտությունը՝ դիտարկելով այն իր կոնցեպտուալ ապարատով, ռացիոնալությամբ և մեթոդոլոգիայով իբրև սպառված: Այդ պատճառով նրանք առաջարկում են մշակել «նոր» իրավունքի տեսություն և քննախոսություններ, որոնք իրապես օբյեկտիվ կնկարագրեն իրավունքի սոցիալական իրականությունը:

Երրորդ, դրական իրավունքի օբյեկտիվության հիմնահարցի ուսումնասիրումը բացի տեսական հրատապությունից, ունի նաև՝ գործնական հրատապություն:

Պատճառը կայանում է նրանում, որ մասնագիտական իրավագիտակցության կրողները, շատ դեպքերում չունեն որևէ մեթոդոլոգիական գործիքակազմ տալու իրավակարգում առաջացած այս կամ այն հարցին օբյեկտիվ պատասխան: Իսկ վերջինս ունենում է լուրջ ազդեցություն «տեսության» և «պրակտիկայի» տրամաբանական ոչ անհրաժեշտ կապով կապվածության վերաբերյալ թեզի զարգացման հարցում:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Դրական իրավունքի օբյեկտիվության թեմային նվիրված են մի շարք աշխատություններ անգլո-ամերիկյան և մայրցամաքային տեսահիրավական գրականության մեջ:

Դրական իրավունքի լեզվանշանագիտական օբյեկտիվության հիմնախնդրի իմաստաբանական (իմա՝ սեմանտիկ) օբյեկտիվության հիմնհարցերին են նվիրված Կ. Գրինավալտի, Ջ. Քոլեմանի, Բ. Լայթերի, Ա. Մարմորի Դ. Բրինքի, Մ. Կրամերի, Տ. Մազարեչեի, Ռ. Գուաստինիի, նաև որոշակի առումով՝ Ռ. Դվորկինի աշխատությունները: Դրական իրավունքի լեզվանշանագիտական օբյեկտիվության դրական իրավունք նշանի մարդու գիտակցությունից և մտքից անկախության հիմնահարցերին են նվիրված՝ Մ. Կրամերի, Բ. Լայթերի, Ա. Մարմորի, նաև որոշակի առումով՝ Ջ. Կոլեմանի, Ս. Սվավասթոդիրի աշխատությունները:

Դրական իրավունքի լեզվատրամաբանական օբյեկտիվության իմացա-բանական հիմնահարցերին են նվիրված՝ Հ. Քելզենի, Ա. Հեյգերսթրոմի, Կ. Օլիվեկրոնայի, Օ. Վայնբերգերի, Գ.Հ. Վրիգթի, Գ. Կալինովսկիի, Ա. Ռոսի, Ե. Բուլիգինի, Կ. Ալչուռոնի, Ռ. Դվորկինի աշխատությունները:

Դրական իրավունքի նորմատիվ համակարգերի լեզվատրամաբանական օբյեկտիվության հիմնահարցերի տարաբնույթ ասպեկտներ շոշափվել են՝ Հ. Քելզենի, Հ. Հարթի, Ա. Ռոսի, Օ. Վայնբերգերի, Ջ. Ռազի, Ն. Բոբիոյի, Ե. Բուլիգինի, Կ. Ալչուռոնի, Պ. Ռոդրիգեսի, Պ. Նավառոյի, Խ. Մորեսոյի, Է. Պատառոյի, Վ. Վալուչոի, Լ. Գրինի, Ռ. Ալեքսիի աշխատություններում:

Դրական իրավունքի գիտաբանական օբյեկտիվության որոշ հիմնահարցեր քննարկվել են՝ Բ. Լայթերի, Հ. Հարթի, Ռ. Դվորկինի, Ջ. Կոլեմանի, Կ. Բայոնի, Ջ. Ռազի աշխատություններում:

Այս ամենի հետ միասին, հարկ է նշել, որ այս հեղինակներից յուրաքանչյուրը դարձնում է իր ուսումնասիրության խնդրո առարկա դրական իրավունքի օբյեկտիվության որոշակի հիմնահարցերը կամ դրանց առանձին մասերը: Այդ իսկ պատճառով, բացակայում է որևէ համալիր հետազոտություն այս թեմայի հետ կապված, ինչը կհավակներ լինելու ընդգրկուն բարձրացված հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծումների առումով: Այսինքն՝ բացակայում է «հիմնախնդիր-հիմնահարց-հնարավոր լուծում» պատճառահետևանքային եռանդամ կապի շրջանակներում՝ դրական իրավունքի լեզվանշանագիտական,

լեզվատրամաբանական և գիտաբանական համալիր հետազոտություն:

Իսկ ինչ վերաբերում է հայրենի իրավաբանական գրականությանը, ապա ուսումնասիրության չեն ենթարկվել նույնիսկ այս թեմայի առանձին վերցրած հիմնահարցերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրների հետազոտումն է և դրանցից ածանցվող հիմնահարցերի բարձրացումը ու հնարավոր պատասխանների և լուծումների տրամադրումն է: Այս նպատակին հասնելու համար աշխատանքի առջև դրվում են հետևյալ խնդիրները՝

Ա. Բաժանել դրական իրավունքի օբյեկտիվության երեք հիմնական հիմնա-խնդիրները՝ լեզվանշանագիտական, լեզվատրամաբանական և գիտաբանական նույնանուն առանցքների,

Բ. Ուսումնասիրությունը իրականացնել «հիմնախնդիր-հիմնահարց-հնարավոր լուծում» պատճառահետևանքային կապի շրջանակում,

Գ. Թեմայի ուսումնասիրման լրիվության և համակողմանիության համար ինտենսիվորեն օգտագործել վերլուծական փիլիսոփայության և վերլուծական իրավագիտության մեթոդոլոգիան,

Դ. Վերհանել դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրների ուսում-նասիրման տեսական և գործնական նշանակությունը,

Ե. Աշխատանքը կառուցել ժամանակակից տրամաբանության, փաստարկման տեսության կոնցեպտուալ կանոնների և հիմնական թեզերի վրա:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրները: Ուսումնասիրության առարկան կազմում է դրական իրավունքի օբյեկտիվության լեզվանշանագիտական, լեզվատրամաբանական և գիտաբանական հիմնախնդիրների լրիվ և համակողմանի ուսումնասիրությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության համար օգտագործվել են, ինչպես գիտական ճանաչողության ընդհանուր, համատեսական մեթոդներ՝ անալիզ, սինթեզ, թեզիս, հակաթեզիս, ինդուկցիա, դեդուկցիա, այնպես էլ հատուկ և մասնակի իրավաբանական մեթոդներ՝ իրավունքի կոնցեպտուալ վերլուծության, իրավունքի բովանդակային վերլուծության, իրավական համակարգի ռացիոնալ վերակառուցման (ռեկոնստրուկցիայի), ձևական տրամաբանական:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության համար որպես տեսական հիմք են ծառայում փիլիսոփաների, իրավունքի փիլիսոփաների և իրավագետների աշխատություններ, որոնցում քննարկվում կամ շոշափվում են դրական իրավունքի օբյեկտիվության տարաբնույթ հիմնահարցեր: Դրանց թվին են դասվում արտասահմանյան փիլիսոփաների, ինչպիսիք են՝ Մ. Շլիքի, Մ.

Մորիցի, Լ. Վիտգենշթայնի, Հ. Պութնամի, Ս. Բլեքբուրնի, Ք. Ռայթի, Մ. Դամիթի, Մ. Դեվիթի, Ջ. Սյորլի, Գ. Հ. Վրիգթի, Դ. Դենեթի, Դ. Չալմերսի, Ռ. Կառնապի, Ու. Քուայնի, Օ. Նեյրաթի և այլ հեղինակների աշխատությունները: Արտասահմանյան իրավագետների և իրավունքի փիլիսոփաների՝ Ե. Բենթամի, Ջ. Օսթինի, Ա. Միխայիլովի, Վ. Մայհոֆերի, Գ. Հուսսեռլի, Ա. Ռայնախի, Հ. Քելզենի, Ա. Ռոսի, Ա. Հեյգերսթրոմի, Հ. Հարթի, Ջ. Ռազի, Ե. Բուլիգինի, Կ. Ալչուռոնի, Լ. Գրինի, Մ. Կրամերի, Ա. Մարմորի, Վ. Վալուչոուի, Ռ. Դվորկինի, Ջ. Ֆինիսի, Ռ. Ալեքսիի և այլ հեղինակների աշխատությունները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

ա. Առաջին անգամ հայրենական, ինչպես նաև արտասահմանյան իրավական գրականության մեջ փորձ է արվել համալիր ուսումնասիրել դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրները՝ պահպանելով «հիմնախնդիր-հիմնահարց-հնարավոր լուծում» հեղինակի կողմից առաջ քաշված չափանիշը:

բ. Թեմայի ուսումնասիրման ընթացքում վերհանվել, վերլուծվել և քննադատության են արժանացվել դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ տարբեր քննախոսությունների ներկայացուցիչների մոտեցումները, փորձվել է հստակեցնել թեմային առնչվող որոշ լեզվատրամաբանական թերություններ պարունակող հասկացություններ և սահմանագծել դրանց գիտագործնական կիրառության շրջանակները:

գ. Դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրների հետ կապված առանձնացվել են երեք հիմնախնդիրներ՝ լեզվանշանագիտական, լեզվատրամաբանական և գիտաբանական, որոնք իրենց համալիրության մեջ համակողմանիորեն ընդգրկում են ուսումնասիման թեման լրիվությամբ:

դ. Ուսումնասիրվել է դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրների ոչ միայն ընդհանուր փիլիսոփայական և գիտական, այլ նաև՝ մեթոդոլոգիական հիմնահարցերը: Իրականացվել է փիլիսոփայական, գիտական, ինչպես նաև մեթոդոլոգիական տարբեր մոտեցումների քննադատական վերլուծություն և դրանց արդյունքում փորձ է արվել տալ համակարգային լուծումներ:

Ի լրումն, ատենախոսության գիտական նորույթը արտահայտված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսության եզրակացության մեջ՝ տեսագործնական բնույթի ընդհանրացումներում և առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրները՝ դրական իրավունքի վերաբերյալ լեզվանշանագիտական, լեզվատրամաբանական և գիտաբանական ճշմարիտ դատողությունների, կոնցեպտուալ կանոնների, չափանիշների և կանխավարկածների հետ կապված հիմնահարցերն են, որոնք

իրենց հերթին ընդգրկում են դրական իրավունքի նկարագրության, դրական իրավունքի էմպիրիկ իրականության, դրա իմացաբանության և տրամաբանության, վերացարկման (աբստրակցիայի) և կոնցեպտուալիզացիայի ամբողջ գործընթացը:

2. Դրական իրավունքի օբյեկտիվությունը, նախ և առաջ, լեզվանշանագիտական հասկացություն է: Այն գործ ունի դրական իրավունքի վերաբերյալ դատողությունների ճշմարտության հետ: Եթե դատողությունը ճշմարիտ է, ապա արտահայտում է օբյեկտի անհրաժեշտ և էական հատկանիշները: Եթե դատողությունը սխալ է, ապա սխալ տեղեկություն է տալիս օբյեկտի վերաբերյալ: Այս դեպքում, դատողության օբյեկտ է հանդիսանում իրավանորմը, որի վերաբերյալ սուբյեկտը արտահայտում է տեղեկություն՝ անելով այդ դատողությունը:

Իրավանորմի վերաբերյալ դատողության օբյեկտիվությունը չի կարող նույնականացվել իրավանորմի օբյեկտիվության հետ: Քանի որ, անհնար «է»-ով դատողություններից բխեցնել «պետք է»-ով պատվիրագրեր և հակառակը՝ «պետք է»-ով պատվիրագրերից՝ «է»-ով դատողություններ: Այսինքն անհնար է նկարագրողական (դիսկրիպտիվ) նախադասություններից բխեցնել պատվիրագրող (պրեսկրիպտիվ) նախադասություններ և հակառակը:

3. Դրական իրավունքի օբյեկտիվությունը գործ ունի նաև դրական իրավունքի լեզվական նշանի և իմաստի մտքից անկախության հարցի հետ: Դրական իրավունքի անկախությունը մարդկային մտքից կարող է դրսևորվել միայն լեզվական առումով: Այսինքն՝ դրական իրավունքի լեզվական նշանի՝ նորմատիվ ձևակերպման և իմաստի՝ նորմի, մտքից անկախությամբ: Դրական իրավունքի նորմատիվ ձևակերպումը (նշանը) և բուն նորմը (իմաստը) թույլ անկախության մեջ են գտնվում մարդկային մտքից, պատկերացումներից և համոզմունքներից:

Այդուհանդերձ, դրական իրավունքի գիտաբանական կանխավարկածները, չափանիշները և նորմերը չունեն թույլ կամ ուժեղ անկախություն մարդկային մտքից, պատկերացումներից և համոզմունքներից:

4. Դրական իրավունքի լեզվատրամաբանական օբյեկտիվությունը կապված է իրավանորմերի դեոնթիկ տրամաբանության հետ: Եթե վրիգթյան «հասարակ» դեոնթիկ տրամաբանությունը միայն գործ ունի գործնական ռացիոնալության հետ, այն է թե՝ ուսումնասիրում է նորմատիվ կամարտահայտության համապատասխանությունը դեոնթիկ տրամաբանության կոնցեպտուալ կանոններին, ապա իրավանորմերի դեոնթիկ տրամաբանությունը ուսումնասիրում է ոչ միայն իրավական-նորմատիվ կամարտահայտության համապատասխանությունը դեոնթիկ տրամաբանության կոնցեպտուալ կանոններին, այլև՝ համապատասխանությունը իրավագիտության մեջ ձևավորված և ընդունված պայմանական (իմա՝ կոնվենցիոնալ)

կանխավարկածներին և կանոններին:

5. Դրական իրավունքի նորմատիվ համակարգի լեզվատրամաբանական օբյեկտիվության անհրաժեշտ հատկանիշն է՝ դրական իրավունքի իրավանորմերի իրավաբանական վավերությունը: Իրավանորմը համարվում է իրավաբանորեն վավեր, եթե այն տվյալ իրավակարգի վավեր նորմի կա՛մ գենետիկ, կա՛մ դեդուկտիվ հետևանքն է: Իրավանորմի կիրառելիության և պարտադիր ուժի հարցերը անհրաժեշտաբար հիմնվում են իրավանորմի իրավաբանական վավերության տեսության վրա:

6. Իրավաբանական պոզիտիվիզմը որպես իրավաընկալման մոտեցում, իր տարաբնույթ քննախոսություններով, միակն է, որ հավակնում է դրական իրավունքի լրիվ և օբյեկտիվ նկարագրությանը առանց իրավունքի՝ այլ սոցիալական կարգավորիչների հետ անհրաժեշտ լեզվանշանագիտական և լեզվատրամաբանական կապի թեզի պնդմանը:

Իրավաբանական ոչ-պոզիտիվիզմի ներկայացուցիչների թեզերը դրական իրավունքի լեզվանշանագիտական և լեզվատրամաբանական օբյեկտիվության վերաբերյալ ունեն տրամաբանական և փաստարկվածության թերություններ:

7. Դրական իրավունքի տեսության լեզուն ոչ միայն նկարագրողական է, այլև՝ պատվիրագրող: Պատվիրագրող լեզուն ծառայում է որպես միջոց՝ ա. դրական իրավունքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքներ ձեռք բերելու, բ. դրական իրավունքի վերաբերյալ ձեռքբերված օբյեկտիվ գիտելիքների տեսականացման և կոնցեպտուալիզացիայի համար:

8. Դրական իրավունքի տեսության և դրական իրավունքի գործառութավորման միջև կապի տրամաբանորեն անհրաժեշտ կամ ոչ-անհրաժեշտ լինելը կախված է՝ միմյանց հետ մրցող նորմոլոգիական և սոցիոլոգիական գիտաբանական կանխավարկածներից: Այս առումով, անհրաժեշտ է գիտական հանդուրժողականության սկզբունքը կիրառել դրական իրավունքի տեսության և դրական իրավունքի գործառութավորման միջև տրամաբանական անհրաժեշտ կամ ոչ-անհրաժեշտ կապի թեզը հաստատող կամ ժխտողների նկատմամբ:

9. Դոկտրինալ և մասնագիտական իրավագիտակցության կրողները օբյեկտիվ գիտելիքի միջոցով կարող են ազդել հասարակության առաջադիմական վերափոխման և «բաց հասարակության» կայացման վրա: Այդպիսի իրավագիտությունը անհրաժեշտ է, որ՝ ա) մաքուր լինի սուբյեկտիվ բարոյաէթիկական արժևորումներից, բ) հիմնվի այնպիսի ընդհանուր և հատուկ տեսությունների, քննախոսությունների վրա, որոնք խարսխված են ժամանակակից տրամաբանության և փաստարկման տեսությունների վրա, գ) ունենա էմպիրիկ նյութի տեսական իմաստավորման համար մեթոդոլոգիական հարուստ գործիքակազմ, դ) իրավանորմերի դեօնթիկ տրամաբանության միջոցով ազդի հասարակության իրավագիտակցության վրա՝ տրամադրելով իրա-

վանորմերի վերաբերյալ գիտելիքներ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեքստը, հիմնական դրույթները և եզրահանգումները կարող են օգտագործվել իրավագիտության, տրամաբանության, մետաէթիկայի, սոցիոլոգիայի ոլորտներում գիտագործնական նպատակներով: Եզրահանգումները և հիմնական դրույթները կարող են օգտագործվել պետության և իրավունքի տեսության, իրավունքի փիլիսոփայության ոլորտում գիտական ձեռնարկների, դասընթացների ծրագրերի մշակման, ինչպես նաև մենագրություններ և այլ գիտական հրապարակումներ հեղինակելիս:

Իրավանորմերի դեոնթիկ տրամաբանությունը, ինչպես նաև իրավական համակարգերի տրամաբանությունը կարող է օգտագործվել և՛ իրավաստեղծ, և՛ իրավակիրառ պետական մարմինների կողմից իրենց գործունեության ընթացքում մի շարք խնդիրների լուծման համար:

Գիտական արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնական թեզերն արտացոլված են հեղինակի կողմից հետևյալ գիտաժողովներում ներկայացված գիտական զեկույցներում. միջազգային նշանակության գիտաժողովներ՝ ա. 1-ին միջազգային կլոր սեղան «Իրավունքի մեթոդոլոգիայի և փիլիսոփայության հիմնախնդիրները» խորագրով, կազմակերպված Ռուսաստանի Դաշնության Սամարայի հումանիտար ակադեմիայի կողմից (2014թ. փետրվարի 28), բ. 10-րդ միջազգային կլոր սեղան «Իրավունքի անթրոպոլոգիա. կարգավիճակը, հիմնահարցերը, տեսլականները» խորագրով, կազմակերպված Ուկրանիայի Հանրապետության Լվովի Իվանո Ֆրանկոյի անվան ազգային համալսարանի կողմից (2014թ. դեկտեմբերի 12-13), գ. 2-րդ միջազգային կլոր սեղան «Իրավունքի մեթոդոլոգիայի և փիլիսոփայության հիմնախնդիրները» խորագրով, կազմակերպված Ռուսաստանի Դաշնության Սամարայի հումանիտար ակադեմիայի կողմից (2015թ. փետրվարի 27-28), դ. 3-րդ միջազգային գիտական և մեթոդոլոգիական սեմինար «Իրավագիտության դասական և հետոչդասական մեթոդոլոգիաները» խորագրով, կազմակերպված Բելոռուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի պետության և իրավունքի տեսության ամբիոնի կողմից (2015թ. ապրիլի 24-25), ե. 3-րդ միջազգային կլոր սեղան «Իրավունքի մեթոդոլոգիայի և փիլիսոփայության հիմնախնդիրները» խորագրով, կազմակերպված Ռուսաստանի Դաշնության Սամարայի հումանիտար ակադեմիայի կողմից (2016թ. փետրվարի 26-27): Տեղական նշանակության գիտաժողովներ՝ զ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. գիտաժողով (2014թ. դեկտեմբերի 9), է. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. գիտաժողով (2015թ. դեկտեմբերի 9-10), ը. ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. գիտաժողով (2016թ. դեկտեմբերի 13-14):

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից և 9 պարագրաֆներից, եզրակացությունից ու իրավական ակտերի և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, ցույց են տրված հետազոտության գիտական նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, բացահայտված է աշխատության գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, տեսական բազան, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացված են հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության **առաջին գլուխը**՝ «Դրական իրավունքի լեզվանշանագիտական և լեզվատրամաբանական օբյեկտիվության հիմնախնդիրները» վերտառությամբ բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ ««է»-ի և «պետք է»-ի հարաբերակցությունը որպես դրական իրավունքի լեզվանշանագիտական օբյեկտիվության հիմնահարց» վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկել դրական իրավունքի նկարագրող (իմա՝ դիսկրիպտիվ) և պատվիրագրող (իմա՝ պրեսկրիպտիվ) լեզվի տարանջատման հիմնահարցը՝ քննադատական իմաստավորման ենթարկելով բոլոր այն քննախոսությունները, որոնք պնդում են՝ «է»-ից՝ «պետք է»-ի, ինչպես նաև «պետք է»-ից՝ «է»-ի գործնական փաստարկման տեսանկյունից՝ արտածման հնարավորության մասին: Հեղինակն եկել է այն եզրահանգման, որ դրական իրավունքի օբյեկտիվությունը նախ և առաջ՝ լեզվաիմաստաբանական (իմա՝ սեմանտիկ) հասկացություն է կապված դրական իրավունքի և դրական իրավունքի լեզվական «ատոմի»՝ իրավանորմերի վերաբերյալ դատողությունների ճշմարտության (իմա՝ օբյեկտիվության) հետ:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Դրական իրավունքի նշանի և իմաստի մարդկային գիտակցությունից և մտքից անկախության հիմնահարցը» վերտառությամբ, հեղինակը տարանջատում է դրական իրավունքի նշանի՝ նորմատիվ ձևակերպման և նորմատիվ ձևակերպման իմաստի՝ իրավանորմի կամ պատվիրագրի՝ մտքից անկախության հիմնահարցը: Հեղինակը, քննադատական վերլուծության ենթարկելով դրական իրավունքի մտքից անկախության վերաբերյալ մի շարք իրավունքի տեսաբանների թեզեր, գալիս է այն եզրահանգման, որ դրական իրավունքի նորմատիվ ձևակերպման (իմա՝

սինտաքսիսի) և իրավանորմի (իմա՝ սեմանտիկայի) կամ պատվիրագրի մտքից անկախությունը՝ դրսևորվում են կատարյալ տարբերակված տեսքով՝ չնայած վերջիններիս մարդկային մտքից անկախության նույնական մակարդակի: Հեղինակն առաջարկում է վերջիններս առանձնացնել իրենց ձևական և մտքից անկախության մակարդակային (իմա՝ որակական և քանակական) առումով՝ դրական իրավունքի գիտաբանական կանխադրույթների, չափանիշների, կոնցեպտուալ կանոնների՝ մարդկային մտքից անկախության թեզից:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «Դրական իրավունքի նորմերի լեզվատրամաբանական օբյեկտիվության հիմնահարցը» վերտառությամբ, հեղինակը դրական իրավունքի նորմերի լեզվատրամաբանական օբյեկտիվության հիմնահարցը կապում է իրավանորմերի իմացաբանական (իմա՝ գնեսեոլոգիական) և գոյաբանական (իմա՝ օնթոլոգիական) կարգավիճակի ուսումնասիրման, ինչպես նաև նորմերի տրամաբանության գոյության հնարավորության հիմնահարցերի ուսումնասիրության հետ: Այս պարագրաֆում հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ դեօնթիկ տրամաբանությունը mutatis mutandis (իմա՝ անհրաժեշտ փոփոխություններով հանդերձ) իրավանորմերի տրամաբանությունն է: Այս առումով «անհրաժեշտ փոփոխություն» եզրույթի տակ, հեղինակն ի նկատի ունի այնպիսի փոփոխություն, ինչը հնարավորություն կտա դեօնթիկ գործնական ռացիոնալությունը կապել իրավանորմերի գիտական ռացիոնալության հետ՝ չփոփոխելով առաջինի էությունը:

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում՝ «Դրական իրավունքի նորմատիվ համակարգի լեզվատրամաբանական օբյեկտիվության հիմնահարցը» վերտառությամբ, հեղինակը ցույց է տալիս, որ դրական իրավունքի համակարգի օբյեկտիվությունը նման է մաթեմատիկական տրամաբանության մեջ առկա աքսիոմատիկ համակարգերի օբյեկտիվությանը: Սակայն, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ դրական իրավունքի համակարգի օբյեկտիվությունը իր մեջ ներառում է հետևյալ կարևոր կանխադրույթները և կանոնները. նորմերի գենետիկ կապի կանխադրույթը, դրական իրավունքի համակարգում իրավանորմերի նույնականացման կանոնը, դրանց վավերության և կիրառելիության կանոնները:

Երկրորդ գլուխը՝ «Դրական իրավունքի օբյեկտիվության հիմնահարցը իրավաբանական պոզիտիվիզմի և ոչ-պոզիտիվիզմի իրավաընկալումների համատեքստում» բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցից յուրքանչյուրը՝ երկուական ենթավերնագրից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Դրական իրավունքի օբյեկտիվության պոզտիվիստական թեզերի առանձնահատկությունները» վերտառությամբ, առաջին ենթավերնագրում՝ «Դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ մեթոդոլոգիական պոզիտիվիզմի թեզը» վերտառությամբ, հեղինակը անդրադառ-

նում է դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ դասական իրավաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչների հայացքներին: Հեղինակն եզրահանգում է, որ դասական իրավաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչները, իրավաբանական պոզիտիվիզմը դիտարկելով որպես մեթոդոլոգիական մոտեցում, բացառում են յուրաքանչյուր տրամաբանորեն հնարավոր անհրաժեշտ կապ դրական իրավունքի օբյեկտիվության և բարոյական, էթիկական արժեքորումների ու դատողությունների միջև:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ երկրորդ ենթավերնագրում՝ «Դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ ինկլյուզիվ և էքսկլյուզիվ պոզիտիվիզմի թեզերը» վերտառությամբ, հեղինակն անդրադառնում է ժամանակակից՝ ինկլյուզիվ (իմա՝ ներառող) և էքսկլյուզիվ (իմա՝ բացառող) պոզիտիվիզմի՝ դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ թեզերին: Քննադատական վերլուծության ենթարկելով երկու քննախոսությունների (իմա՝ դիսկուրսների) ներկայացուցիչների թեզերը՝ հեղինակը ներկայացնում է իրավաբանական պոզիտիվիզմի մի շարք դրույթների անկատարությունը՝ իր կողմից ձևակերպված «մետանորմատիվ փաստարկ»-ի միջոցով: Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ ներառող և բացառող պոզիտիվիզմի հիմնական մեթոդոլոգիական տարընկալումները՝ դրական իրավունքի օբյեկտիվության և բարոյականության միջև կապի շուրջ, առաջ են գալիս ոչ թե՝ դրական իրավունքի լեզվաիմաստաբանական, այլ լեզվատրամաբանական օբյեկտիվության շրջանակներում: Լեզվաիմաստաբանական առումով՝ իրավաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչները բացառում են դրական իրավունքի նկարագրության և բարոյական դատողությունների միջև անհրաժեշտ կապի թեզը: Սակայն, լեզվատրամաբանական առումով, իրավաբանական պոզիտիվիզմը բացառում է միայն համընդհանուր անհրաժեշտ կապի թեզը՝ դրական իրավունքի փաստական և իրավաբանական վավերության որոշման հարցի շրջանակներում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Դրական իրավունքի օբյեկտիվության ոչ-պոզիտիվիստական թեզերի առանձնահատկությունները» վերտառությամբ, առաջին ենթավերնագրում՝ «Իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ Ռ. Դվորկինի թեզը», հեղինակն ուսումնասիրում և քննադատական վերլուծության է ենթարկում ժամանակակից ազդեցիկ իրավագետ, փիլիսոփա Ռ. Դվորկինի թեզն իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ: Հեղինակը ցույց է տալիս, որ Ռ. Դվորկինի իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ ամբողջ թեզը, այդ թվում՝ իրավաբանական պոզիտիվիզմի քննադատությունը, հիմնված է Ռ. Դվորկինի կողմից՝ իրավաբանական պոզիտիվիզմի դրույթների թերի մեկնաբանման, ինչպես նաև հասկացությունների և եզրույթների ուսումնասիրման ընթացքում՝ կարևոր մեթոդոգիական տարանջատումներ չկատարելու վրա:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ երկրորդ ենթավերնագրում՝ «Դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ Ջ. Ֆինիսի և Ռ. Ալեքսիի թեզերը» վերտառությամբ, հեղինակը քննադատական վերլուծության է ենթարկում ժամանակակից ոչ-պոզիտիվիզմի ներկայացուցիչներ Ջ. Ֆինիսի և Ռ. Ալեքսիի դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ թեզերը: Հեղինակը ցույց է տալիս, որ Ջ. Ֆիննիսի և Ռ. Ալեքսիի իրավաբանական պոզիտիվիզմի մեթոդոլոգիայի քննադատությունը և դրա արդյունքում իրենց կողմից առաջ քաշվող՝ դրական իրավունքի օբյեկտիվության ոչ-պոզիտիվիստական թեզերը կատարելապես հիմնված են տրամաբանության, փաստարկման տեսության, ինչպես նաև հասկացությունների և եզրույթների ուսումնասիրության մեթոդաբանական սխալների վրա: Այս ամենի արդյունքում՝ հեղինակն, ընդունելով իրավաբանական պոզիտիվիզմի որոշ դրույթների անկատարությունը, մեթոդաբանական առումով, իր համակարությունն է հայտնում իրավաբանական պոզիտիվիզմին:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝** «Դրական իրավունքի օբյեկտիվության գիտաբանական հիմնախնդիրները» կազմված է երեք ենթագլուխներից:

Երրորդ գլխի՝ «Դրական իրավունքի օբյեկտիվության գիտաբանական հիմնախնդիրները» վերտառությամբ, առաջին ենթավերնագրում՝ «Դրական իրավունքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման մեթոդոլոգիական հիմնահարցերը» վերտառությամբ, հեղինակը քննարկում է՝ դրական իրավունքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման մեթոդոլոգիան, դրա նշանակությունը և օբյեկտիվ գիտելիքի համակարգման հիմնահարցերը: Հեղինակն գալիս է այն եզրահանգման, որ դրական իրավունքի վերաբերյալ տեսությունը և դրական իրավունքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման մեթոդոլոգիան, որպես դրական իրավունքը նկարագրող լեզու և տեխնիկական պատվիրագիր՝ միմյանց հետ կապված են տրամաբանորեն նշանակալի կապով: Հեղինակը, գալիս է նաև այն եզրահանգման, որ դրական իրավունքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման մեթոդոլոգիան չի հանդիսանում ապրիորի դատողությունների ամբողջություն՝ հիմնված տրամաբանական անհրաժեշտության հասկացության վրա: Այլ, իրականում՝ մեթոդոլոգիան սոցիալական իրականության աբստարկցիայի (իմա՝ վերացարկման) արդյունքում իրավագիտության կողմից հասկացութային-տեխնիկական ապարատի մեջ նոր եզրույթների, տեխնիկական նորմերի ընդգրկման հետևանք է: Վերջինս, ըստ հեղինակի, անհրաժեշտաբար, հիմնված է դրական իրավունքի սոցիալական գոյաբանության վրա:

Երկրորդ գլխի՝ երկրորդ ենթագլխում՝ «Դրական իրավունքի տեսության և գործառութավորման հարաբերակցությունը» վերտառությամբ, հեղինակը ցույց է տալիս, որ դրական իրավունքի վերաբերյալ գիտելիքի օբյեկտիվությունը ունի

նաև նորմոլոգիական և սոցիոլոգիական առանցք: Հեղինակն եզրահանգում է, որ գիտական հանդուրժողականությունը և փոխըմբռնումը նորմոլոգների և սոցիոլոգների միջև ընդունելի է, եթե միայն՝ որպես կանխադրույթ ընդունվում է դրական իրավունքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման ընդհանուր տեսության ավտոնոմիան:

Երկրորդ գլխի՝ երրորդ ենթագլուխը՝ «Օբյեկտիվ տեսական գիտելիքի ազդեցությունը հասարակության առաջադիմական վերափոխման վրա» վերտառությամբ, հեղինակն առանձնացնում է դրական իրավունքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքի դերը գործող օրենսդրության, հասարակական բարոյականության և էթիկայի առաջընթացի և զարգացման գործում: Հեղինակը նախանշում է որոշակի ուղեգիծ, որին համապատասխանելու դեպքում իրավագիտությունը՝ ի դեմս իրավունքի ընդհանուր տեսության կկարողանա դրական առումով ազդել հասարակական պրակտիկաների վրա:

Եզրակացության մեջ ընդգրկված են հեղինակի հիմնական արդյունքները և եզրահանգումները, որոնք ի հավելումն պաշպանության ներկայացվող դրույթների՝ ամփոփ հանգում են հետևյալին.

1. Կարծում ենք, որ դրական իրավունքի օբյեկտիվության հիմնախնդիրները՝ դրական իրավունքի վերաբերյալ լեզվանշանագիտական, լեզվատրամաբանական և գիտաբանական ճշմարիտ դատողությունների, կոնցեպտուալ կանոնների, չափանիշների և կանխավարկածների հետ կապված հիմնահարցերն են, որոնք իրենց հերթին ընդգրկում են դրական իրավունքի նկարագրության, դրական իրավունքի էմպիրիկ իրականության, դրա իմացաբանության և տրամաբանության, վերացարկման (իմա՝ աբստրակցիայի) և կոնցեպտուալիզացիայի ամբողջ գործընթացը:
2. Կարծում ենք, որ դրական իրավունքի օբյեկտիվությունը, նախ և առաջ, նշանագիտական (իմա՝ սեմիոտիկ) հասկացություն է: Այն կապված է դրական իրավունքի վերաբերյալ նորմատիվ դատողությունների ճշմարտության հետ: Այսպես, դրական իրավունքի օբյեկտիվ նկարագրության համար անհրաժեշտ են, որպեսզի դրական իրավունքի (և որն առանձնակի կարևոր է՝ նորմատիվ համակարգի) վերաբերյալ մեր դատողությունները լինեն ճշմարիտ: Օրինակ, եթե LS լատինատառ հապավմամբ նշված իրավական համակարգում p արարքը արգելված է q դեպքում, ապա դատողությունը, որ LS իրավական համակարգում p արարքը արգելված է q դեպքում կլինի ճշմարիտ: Իսկ դատողությունը, որ LS իրավական համակարգում p արարքը արգելված չէ q դեպքում կլինի սխալ, քանի որ p արարքը արգելված է q դեպքում:
3. Դրական իրավունքի օբյեկտիվությունը գործ ունի նաև դրական իրավունքի լեզվական նշանի և իմաստի մտքից անկախության հարցի հետ: Դրական իրավունքի նշանային ասպեկտը, որպես կանոն, թույլ անկախության մեջ է

գտնվում մտքից: Այսինքն՝ կախված է իրավական համայնքի կողմից մշակված կոնցեպտուալ կանոններից, չափանիշներից և կանխադրույթներից: Դրական իրավունքի նորմատիվ ձևակերպումների կամ նշանի մարդկային մտքից անկախությունից՝ տարբերվում է դրական իրավունքի իմաստաբանության՝ մարդկային մտքից անկախությունը: Քանի որ դրական իրավունքի գոյաբանությունը պայմանավորված է հենց լեզվով, անհնար է խոսել դրական իրավունքի մտքից բացարձակ անկախության մասին: Դրական իրավունքի գիտաբանական կանխավարկածները, չափանիշները և նորմերը չունեն թույլ կամ ուժեղ անկախություն մարդկային մտքից, պատկերացումներից և համոզմունքներից: Դրանք ձևակերպվում են դոկտրինալ իրավագիտակցության մեջ և հանդիսանում են իրավագետ-գիտնականների միջև առկա այս կամ այն գիտական հարցի վերաբերյալ բարձրաձայն կամ լռակյաց համաձայնության արդյունք:

4. Քննարկելով իրավանորմերի լեզվատրամաբանական օբյեկտիվության հիմնահարցերը կարելի է անել հետևյալ եզրհանագումները՝

Ա. Իրավանորմերի գոյաբանական կարգավիճակը պայմնավորված է այն իմացաբանական քննախոսությամբ, որին հարում է այս կամ այն հետազոտողը (նորմատիվ ռեալիզմ, հակառեալիզմ կամ սկեպտիցիզմ): Այս գոյաբանական կարգավիճակի վերաբերյալ քննախոսություններից յուրաքանչյուրը պայմանավորում է իրավանորմերի լեզվատրամաբանական օբյեկտիվության հարցի վերաբերյալ յուրահատուկ պատասխան: Մեր կարծիքով, այս քննախոսություններից լավագույնն ու փաստարկվածը տրամաբան Գ. Վրիգթի կողմից առաջ քաշվողն է, որին վերը նշված մեր կողմից առաջարկված որոշ փոփոխությունների և փաստարկների ուժով՝ մենք ևս հարում ենք:

Բ. Իրավանորմերի ռացիոնալությունը պայմանավորված է իրավանորմերի ընդունման ընթացքում դրված նպատակներին հասնելու համար օգտագործվող միջոցների՝ նորմատիվ կամարտահայտության, իրավանորմերի դեոնթիկ տրամաբանության կանոններին համապատասխանելու հետ (ինչը անհրաժեշտ է տարբերակել «սովորական» դեոնթիկ տրամաբանությունից): Դեոնթիկ տրամաբանությունը, ի տարբերություն առաջինի, ուսումնասիրում է իրավանորմերի ընդհանուր ռացիոնալության մի մասը՝ գործնական ռացիոնալությունը: Իսկ առաջինը՝ ընդգրկում է իրավանորերի ընդհանուր ռացիոնալությունը՝ իր երկու բաղադրատարրերով՝ գիտական և գործնական:

5. Կարծում ենք, որ դրական իրավունքի համակարգերը՝ նորմատիվ համակարգեր են, որոնք նման են աքսիոմատիկ համակարգերին: Դրանք ունեն՝ սկզբնական և որոշակի սահմանափակ ասույթների ամբողջություն, նորմերի միջև գենետիկ և դեդուկտիվ կապեր: Սակայն, դրական իրավունքի համակարգի լեզվտրամաբանական օբյեկտիվությունը ոչ միայն հիմնվում է

նշյալ առանձնահատկությունների վրա, այլ նաև՝ դրական իրավունքի նորմերի վավերության, կիրառելիության և պարտադիր ուժի վրա: Դրական իրավունքի համակարգի լեզվտրամաբանական օբյեկտիվությունը ամբողջությամբ կախված է դրական իրավունքի նորմերի վավերությունից և դրանց նույնականացման կանոնի առկայությունից: Նույնականացման կանոնը՝ իր համապատասխան կառուցվածքով, տալիս է պատասխան դրական իրավունքի նորմերի միջև համակարգային կապերի առկայության կամ բացակայության վերաբերյալ հարցերին, ինչպես նաև համակարգակազմ և համակարգային նորմերի վավերության, կիրառելիության և պարտադիր ուժի վերաբերյալ հարցերին:

6. Կարծում ենք, որ դրական իրավունքի օբյեկտիվության վերաբերյալ մեթոդոլոգիական, ինչպես նաև ինկլյուզիվ պոզիտիվիզմի ներկայացուցիչների տեսակետը հստակ է՝ բարոյականությունը չի կարող համարվել անհրաժեշտ պայման դրական իրավունքի, իմաստաբանական (իմա՝ սեմանտիկ) առումով, օբյեկտիվ նկարագրության համար: Լեզվատրամաբանական օբյեկտիվության առումով՝ մեթոդոլոգիական պոզիտիվիզմը մերժում է դրական իրավունքի գոյության փաստի վավերության և իրավաբանական վավերության որոշման համար՝ բարոյականության անհրաժեշտ կամ (և) բավարար պայման լինելը, իսկ ինկլյուզիվ պոզիտիվիզմը չի բացառում՝ բարոյականության **հնարավոր** անհրաժեշտ կամ (և) բավարար պայման լինելը դրական իրավունքի փաստական վավերության որոշման հարցում որոշ իրավակարգերում: Սակայն, մերժում է դրական իրավունքի իրավաբանական վավերության համար բարոյականության անհրաժեշտ կամ (և) բավարար պայման լինելը: Էքսկլյուզիվ պոզիտիվիզմը մերժում է բարոյականության անհրաժեշտ կամ (և) բավարար պայման լինելը դրական իրավունքի գոյության փաստի վավերության որոշման հարցում (կամ՝ իրավունքի բնորոշման հարցում), սակայն ճանաչում է դրական իրավունքի իմաստաբանական (իմա՝ սեմանտիկ) և իրավաբանական վավերության շրջանակներում անհրաժեշտ կապի առկայությունը միմյանց միջև:

7. Կարծում ենք, որ դրական իրավունքի պատվիրագրող և նկարագրողական լեզվի միջև առկա է գործուն կապ, որի արդյունքում դրական իրավունքի հասկացութային-տեխնիկական լեզուն հարստանում է նոր հասկացություններով, իսկ մեթոդոլոգիական լեզուն՝ նոր մեթոդներով, կոնցեպտուալ կանոններով և չափանիշներով: Այսպիսով, իրավագիտությունը ոչ թե հանդես է գալիս ընդհանուր սոցիալական բանականությունից բարձր կանգնած գիտելիքի ձեռքբերման և նկարագրման միջոց, այլ ընդհանուր սոցիալական բանականության ընդլայնված կեցություն, իրեն յուրահատուկ՝ նկարագրողական և պատվիրագրող լեզվով:

8. Կարծում ենք, որ դրական իրավունքի տեսության և դրական իրավունքի գործառութավորման միջև կապի տրամաբանորեն անհրաժեշտ կամ ոչ-անհրաժեշտ լինելը կախված է՝ միմյանց հետ մրցող նորմոլոգիական և սոցոլոգիական գիտաբանական կանխավարկածներից: Այս առումով, անհրաժեշտ է գիտական հանդուրժողականության սկզբունքը կիրառել դրական իրավունքի տեսության և դրական իրավունքի գործառութավորման միջև տրամաբանական անհրաժեշտ կամ ոչ-անհրաժեշտ կապի թեզը հաստատող կամ ժխտողների նկատմամբ: Սոցիոլոգիզմի նկատմամբ հնարավոր է դրսևորել հանդուրժողականություն այնքանով, որքանով իրավագիտության համար կարևոր է իրավունքի հասարակական գործառութավորման ուսումնասիրությունը: Սակայն, անգամ մինիմալ շեղումը նման հանդուրժողականության նշյալ սահմանից, կհանգեցնի իրավագիտության որպես գիտության ավտոնոմիայի կորստի և դրա գիտական ռացիոնալության փոփոխմանը:
9. Կարծում ենք, որ իրավագիտությունը օբյեկտիվ գիտելիքի միջոցով կարող է ազդել հասարակության առաջադիմական վերափոխման և բաց հասարակության կայացման վրա: Առաջին, իրավագիտությունը անհրաժեշտ է, որ հնարավորինս ձգտի մաքուր լինել սուբյեկտիվ էթիկական արժևորումներից: Երկրորդ, նման իրավագիտությունը պետք է ձգտի այնպիսի ընդհանուր տեսությունների, որոնք լավագույնս են հիմնված ժամանակակից տրամաբանության և փաստարկման տեսությունների վրա: Այսինքն՝ տրամաբանական փաստարկների և հիմնավորումների տեսանկյունից անխոցելի կամ քիչ խոցելի են: Երրորդ, պետք է բարձրանա էմպիրիկ նյութի տեսական իմաստավորման կարևորությունը, խրախուսվի պրակտիկայի տեսականացումը: Հակառակ դեպքում՝ սոցիալական պրակտիկան կզրկի գիտությանը հասարակության վրա ազդելու գործիքներից: Այդժամ, իրավագիտությունը կլինի արվեստ կամ արհեստ, այլ ոչ թե՝ գիտություն: Չորրորդ, դեոնթիկ տրամաբանական գիտելիքների կիրառմամբ փորձել հասարակության իրավագիտակցությունը բարձրացնել՝ նորմերի վերաբերյալ գիտելիքներ տրամադրելով, տալ նորմերի ուսումնասիրման մեթոդոլոգիական գործիքակազմ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. *Казарян Т. М.* От классической к постнеклассической научной рациональности: проблемы современного юридического мышления // «Հանրային կառավարում» գիտ. հանդես, Երևան, No 1. 2013, С. 152 – 159.
2. *Казарян Т. М.* Мета-нормативные принципы и мета-нормы права, Статті учасників ювілейного X Міжнародного круглого столу (м. Львів, 12 – 13 грудня 2014 року) : У 2-х частинах – Львів : Галицька Видавнича Спілка, 2015. – Частина I. – 272 с. – Вид. 2-е, доп., С. 242-249.
3. *Казарян Т. М.* Методы исследования норм права в аналитической философии права// Проблемы методологии и философии права: сб. ст. междунар. круглого стола. 28 февраля 2014 г. Самара: Самар. гуманит. акад., 2014, С. 36-46.
4. *Казарян Т. М.* Объективность права и морали с позиции аналитической философии права// Этические и антропологические характеристики современного права в ситуации методологического плюрализма: сб. науч. тр. под общ. ред. В.И. Павлова, А.Л. Савенка. Минск: Акад. МВД. 2015, с. 184-192.
5. *Казарян Т. М.* Логика норм права и нормативных актов// Проблемы методологии и философии права: сб. ст. междунар. круглого стола. 27-28 февраля 2014 г. Самара: Самар. гуманит. акад., 2015, С. 81-93.
6. *Казарян Т. М.* Юридический позитивизм и независимость онтологии права от сознания// Евразийский юридический журнал. Вып., 98, Но. 7 (2016), С. 142-145.
7. *Казарян Т.М.*. Проблема независимости права от сознания в свете различения синтаксиса и сематики права: критика взглядов М. Креймера. Проблемы методологии и философии права: сб. ст. III междунар. круглого стола. 26-27 февраля 2016 г. Самара: Самар. гуманит. акад., 2016. С. 69-76
8. Տ. Մ. Ղազարյան, Իրավական համակարգի արդյունավետության և նույնականացման չափանիշները. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թ. գիտաժողովի նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջեր 114-126:
9. Տ. Մ. Ղազարյան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թ. գիտաժողովի նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2016, էջեր 22-29:

КАЗАРЯН ТИГРАН МЕХАКОВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЪЕКТИВНОСТИ ПОЛОЖИТЕЛЬНОГО ПРАВА

Резюме

Диссертационное исследование посвящено основным проблемам объективности права. Хорошо известно, что во многих учебниках, пособий, монографий суждение об объективности права и объективности системы права является аподиктическим. В диссертации, в первых раз в юридической литературе, принята попытка формулировать систематический взгляд на основные проблемы объективности права в рамке триады - «проблема-вопрос-возможное решение».

В диссертации, на базе работ современных западных теоретиков и философов права, предлагается новая концепция объективности права.

Как часть диссертационного исследования, обсуждается семантическая, синтаксическая, логическая, методологическая и социологическая измерения объективности права.

Тщательно рассмотрены аргументы в пользу преодолимости «гильотины Юма» предложенные разными современными аналитическими философами. Тщательно показаны все основные ошибки которые совершают, те кто считают, что «гильотина Юма» возможно преодолеть. В диссератации анализируется также проблематика независимости права от сознания, обсуждаемая в современной западной философии права. Автор исследуя соответствующие концепций современных западных теоретиков права, предлагает их критику на базе различения правовой нормы и нормы-формулировки, синтаксиса и семантики права.

Рассматриваются также вопросы касательно: I) онтологического статуса правовых норм; II) основных правил деонтической логики и их применяемости в правовой методологии. Сделаны также ряд выводов касательно соотношения логики и права.

В диссертации также обсуждается вопрос позитивистского и непозитивистского подхода касательно объективности права. Обсуждая точки зрения современных теоретиков права и сделав критическую рефлексию этих взглядов, автор подчеркивает необходимость позитивистского подхода к воп-

росам объективности права. Автор приводит «мета-нормативный аргумент» как средство избавления от некоторых недостатков позитивизма.

На базе работ современных западных теоретиков и философов права также предлагается описание методологической объективности позитивного права и процесс получения объективного знания о праве. Также показаны общие эпистемологические основания этих методов.

Как часть диссертационного исследования также изучены вопросы социологического измерения объективного знания. Можно утверждать, что если признаем преимущество нормологической презумпции над социологической, то правовая наука является скорее автономной чем интегрированной наукой. Но, если принимаем другую перспективу в этом вопросе, в частности, что социологическая презумпция важнее нормологического, тогда принимаем тезис, что правовая наука является интегральной частью социологии. Объективное знание о праве (теория права) может стать вехой в процессе создания открытого общества, если только соблюдаются следующие необходимые условия: а) оно должно быть свободной от субъективных моральных и этических ценностных суждений, б) оно должно фундироваться на общих и специальных теориях, которые должны быть основаны на современных теориях аргументации и логики, в) оно должно иметь богатую методологию для абстракций эмпирической реальности права, г) такое знание о правовых нормах должно быть получено с помощью деонтической логики.

TIGRAN MEKHAK GHAZARYAN

MAIN PROBLEMS OF OBJECTIVITY OF POSITIVE LAW

Summary

PhD dissertation topic concerns with the issue of objectivity of positive law. It's a well known fact that nearly every handbook dedicated to the general theory of law takes for a granted the fact of objectivity of law and the fact of the objectivity of the system of law as well. For the first time in the scientific literature, it is made a step to give a systematic viewpoint on the issue within "problem-matter-possible solution" systematic framework.

Basing on works of contemporary Western legal theorists and philosophers the dissertation provides a new account of objectivity of positive law.

As a part of the work are discussed the semantical, the syntactic, logical, methodological and sociological dimensions of objectivity of law.

All the arguments for the derivability from "is" an "ought" and vice versa proposed by contemporary analytical philosophers are thoroughly examined. Carefully demonstrated all the fundamental fallacies of the supporters of derivability from "is" an "ought" and vice versa. Issues concerning independence of law from consciousness are also discussed. In the disseration are examined the relevant conceptions given by the contemprory western scholars, offering criticism of these conceptions on the basis of differentiation between a legal norm and a norm-formulation, syntax and semantics of law.

A range of questions regarding rationality of law are also examined in this dissertation: I) ontological status of legal norms, II) applicability of main rules of deontic logic in legal methodology. Also some conclusions on the relationship between logic and law are drawn.

In dissertation are discussed the problems of legal positivism and non-positivism concerning objectivity of positive law. Discussing the viewpoints of contemporary legal scholars and making a critical reflection on the presented views, the author stresses the necessity and relevance of the positivistic approach to objectivity of law. Author brings about a meta-normative argument which is a remedy for some deficient points of legal positivism.

Basing on works of contemporary Western legal theorists and philosophers the dissertation also provides a description of methodological objectivity of law and the

process of acquiring objective knowledge. General epistemological foundation of these methods is also presented.

As a part of the dissertation - are also discussed the matters concerning the sociological dimension of the objective knowledge. It can be asserted that - if we consider the priority of the normological assumption over the sociological one then we have to assume that the legal science as we know it – is rather an autonomous than integrated science. But if we choose another perspective – that is – sociological assumption is prior than normological one than the legal science is an integral part of sociology. Objective knowledge about law (Legal Theory) can become a milestone for the open-society building process if following perquisites are observed: a) being free from subjective moral and ethical evaluations; b) should be grounded on general and special theories which are based on contemporary argumentation theory and logics; c) should have vast methodological tools for doing an abstraction of empirical reality; d) acquiring knowledge about legal norms using the deontic logic of law.